ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՌՈՒՍԱԽԻՆԻԼԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Դ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Ռուսախինիլի քաղաքը (Թոփրախ-կալե՝ Վան քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում) հիմնադրել է Ուրարտուի թագավոր Ռուսա I-ը (735—713)։ Այդ մասին տեղեկություն է պահպանվել շուրջ 25 կմ Վանից արևելք գտնվող Թոնի գյուղի մոտակայքի արհեստական լճի շրջակայքից հայտնաբերված արձանագրությունում[1]։

Արձանագրությունում Ռուսա I-ը պատմում է ոչ միայն իր անունով կոչվող Ռուսախինիլի քաղաքը հիմնադրելու, այլև իր կողմից նրան կից ուրարտական արքայական կամ պետական տնտեսություն ստեղծելու մասին։ Հանուն այդ նպատակի նա ստեղծում է արհեստական լիճ, անցկացնում է ջրանցք և մշակելի դարձնում նորակառույց քաղաքի շրջակայքի հողատարածությունները։ Մինչ այդ ազատ, անմշակ հողերը դառնում են մշակելի, որոնց բազայի վրա հիմնվում են «խաղողոտ», «անտառ», «հացահատիկի ցանքսի դաշտ»։ Ջուր է տրամադրվում նաև Տուշպա արքայական քաղաքի կարիքների համար։ Արձանագրությունում տեղեկություններ կան խաղողագործության, հացահատիկի մշակության, անտառամշակության մասին։

Ռուսախինիլի քաղաքի տնտեսության ձևերի մասին տեղեկություններ է պահպանել նաև Ռուսախինիլիի ավերակներից գտնված սեպագիր փաստաթուղթը (գրված կավե աղյուսի վրա), որի հեղինակը անհայտ է[2]։

Նրա իմաստից հասկանալի է, որ Ռուսախինիլի քաղաքի տնտեսության աղյուսներից մեկն էլ եղել է անասնապահություն։

Ռուսախինիլի քաղաքի արհեստների մասին տեղեկություններ են պահպանել հնագիտական պեղումների ընթացքում այդ քաղաքի տարածքից հայտնաբերված մի շարք առարկաներ[3]։ *Դրանց մի մասի վրա կան արձանագրություններ, որոնք ցույց են տալիս, թե ում են պատկանում այդ առարկաները, ինչ նպատակի համար են օգտագործվել կամ դրանց մի մասը տարողության ինչպիսի չափեր ունի։*

Այդ առարկաներից են Ռուսա I-ին պատկանող ճյուղավոր աշտանակը[4],

---

1 C. F. Lehmann-Haupt. Corpus Inscriptionum Chaldicarum. Berlin und Leipzig, 1935, II, S. 145, Tafel 38(f) (այսուհետև՝ CICH); F. W. König, Handbuch der chaldisen Inschriften, Teil II, Tafel 92(121) (այսուհետև՝ Handbuch); Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, №268 (далее УКН).

2 A. H. Sayce. The Cuneiform Inscriptions of Van, IV (Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland (JRAS). London, 1893, № LXXVIII, p. 15; F. W. König. Handbuch, Teil II, S. 163, Incerta 11; Г. А. Меликишвили. УКН, № 326; И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963, №13 (далее УПД).

3 C. F. Lehmann-Haupt. Materialien zur alteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Berlin, 1907, S. 65—124 (այսուհետև՝ Materialien); R. D. Barnett. The Excavations of the British Museum at Toprak Kale Near Van (Iraq, vol. xii, part I, London, 1950), p. 7—16 (այսուհետև՝ Excavations).

4 УКН, № 443. *Արձանագրությունում չի բերված Ռուսա թագավորի հայրանունը, բայց այդմ էլ այն Ռուսա I-ին վերագրելը պայմանական է՝ տե՛ս* H. Hoffmann, J. Friedrich. Der urartaische Kandelaber in Hamburg und seine Keilinschrift (ZDMC, Leipzig, 1961, Bd. 111, N. F. 36, Ht. 2).

ինչպես նաև Ռուսա I-ի զինանոցին[5] պատկանող գավաթը։ Այդ առարկաներից են նաև մի շարք բրոնզե վահանները, որոնցից երկուսը պատկանում են Ռուսա II (685—645) թագավորին[6], իսկ վեցը՝ Ռուսա III-ին։ Ընդ որում, Ռուսա III-ին պատկանող այդ վահաններից 5-ի վրա գրված է, որ Ռուսան դրանք նվիրել է Խալդի աստծուն[7], իսկ մեկի արձանագրությունում ավելացած է, թե Ռուսան այդ վահանը նվիրել է Խալդի աստծուն հանուն իր կյանքի[8]։ Ռուսա III-ին պատկանող վահաններից մեկի վրա քանդակված են առյուծների ու ցուլերի պատկերներ[9]։ Գտնված բրոնզե վահաններից երկուսի արձանագրություններում[10] հիշատակված են ուրարտական ինչ-որ թագավորի տիտղոսաչարի վերջին բառերը։ Հայտնաբերվել են նաև բրոնզե սկուտեղ[11] և բրոնզե հատիչ գործիք[12] Ռուսա III-ի արձանագրությամբ։ Գտնված իրերից է ոսկրե ապարանջանը, որի վրա արձանագրություն կա[13]։ Հայտնաբերվել են անոթներ[14], կարասների կտորներ[15], որոնց վրա գրված են դրանց տարողության չափերը։

Ռուսախինիլի քաղաքի պեղումներից Լեհման-Հաուպտը և Վ. Բելքը 1898 թ. հայտնաբերել են գյուղատնտեսական աշխատանքների երկաթե գործիքներ՝ խոփ, գութան, բրիչ, մանգաղ, եղան[16]։

Ինչպես երևում է, Ռուսախինիլի քաղաքում զարգացած է եղել արհեստագործությունը։ Հատկապես աչքի են ընկել մետաղամշակության և կավագործության հետ կապված արհեստները։ Մետաղամշակության, մասնավորապես բրոնզի մշակության բազայի վրա զարգացել է զինագործական արհեստը, որի արտադրանքներից են եղել բրոնզե վահանները։ Մետաղամշակության բազայի վրա զարգացել են նաև աշխատանքի գործիքների (երկաթե խոփերի, գութանների, բրիչների, մանգաղների, եղանների, բրոնզե հատիչների) և կենցաղային իրերի (բրոնզե սկուտեղների) պատրաստման արհեստները։ Մետաղամշակության հետ կապված զարգացել է նաև քանդակագործությունը, որի նմուշներից են վահանների վրա քանդակված առյուծների ու ցուլերի պատկերները։ Մետաղամշակությունը, մասնավորապես գյուղատնտեսական աշխատանքների երկաթե գործիքների պատրաստումը, նպաստել է հողագործության զարգացմանը։

Կավագործության բազայի վրա զարգացել է բրուտագործությունը, որի արտադրանքներից են կարասները, անոթները, գավաթները, աշտանակները։

Արհեստների ճյուղերից է եղել նաև զարդագործությունը, որի արտադրանքներից է ոսկրե ապարանջանը։

Մատնանշված բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Ռուսախինիլի քաղաքի տնտեսության հիմնական ճյուղերն են եղել այգեգործությունը (խաղողագործություն), դաշտավարությունը (հացահատիկի մշակություն), անտառամշակությունը, անասնապահությունը և մետաղամշակության ու բրուտագործության հետ կապված արհեստագործությունը։ Զարգացման է հասել նաև այդ

---

5 УКН, № 443 (II).

6 R. D. Barnett. Excavations, p. 7; КУН, №№ 282, 454.

7 R. D. Barnett. Excavations, p. 13—15; УКН, №№ 289, 290, 292, 293, 294.

8 УКН, № 458 (a).

9 УКН, № 458 (a).

10 R. D. Barnett. Excavations, p. 13; УКН, №№ 287, 291.

11 R. D. Barnett. Excavations, p. 16; УКН, № 296 (a-b).

12 C. F. Lehmann-Haupt. Materialien, S. 99; R. D. Barnett. Excavations, S. 16; УКН, № 296 (a-b).

13 C. F. Lehmann-Haupt. Armenien einst und jetzt, Berlin und Leipzig, 1931, Bd. II, Heft 2, S. 584—585 (*այսուհետև՝* Armenien); УКН, № 365.

14 УКН, № 523 a-x.

15 C. F. Lehmann-Haupt. Materialien, S 111; Armenien, Bd. II, Heft 2. S. 473, 560, 585; УКН, № 340a-x.

16 C. F. Lehmann-Haupt. Materialien, S. 101, Figur 72.

տնտեսության ռազման սիստեմը։ Բնական է ենթադրել, որ այդ տնտեսության մեջ աշխատել են ջրանցքաշինարարները, այգեգործները (խաղողագործներ), դաշտավարները (հացահատիկ մշակողներ), անտառաբույծները, անասնապահները և մետաղամշակության ու կավագործության հետ կապված արհեստավորները (զինագործներ, բրուտներ, դարբնագործներ, քանդակագործներ), գյուղատնտեսական աշխատանքների երկաթե գործիքներ պատրաստողներ՝ դարբիններ)։ Հենց սրանք էլ, այն է՝ ջրանցքաշինարարները, այգեգործները (խաղողագործներ), դաշտավարները (հացահատիկ մշակողներ), անտառաբույծները, անասնապահները, զինագործները, դարբինները, բրուտները, դարբնագործները, քանդակագործները կազմել են Ռուսախինիլի քաղաքի հասարակության խավերը։

Ռուսախինիլի քաղաքի հասարակության խավերի և նրանց սոցիալական հարաբերությունների մասին կոնկրետ և արժեքավոր տեղեկություններ է պահպանել Ռուսա II-ի (685—645) հետևյալ սեպագիր փաստաթուղթը (գրված կավե աղյուսի վրա). «Տարին, որում քաղաքից Ռուսայի՝ Արգիշթիի (որդու), Տագան՝ իշխուգուլյան թագավորի ավագ որդին, եկավ Մանա երկիր Աքայի տեղը, երբ խալդի թագավորին թողեցին (բնակեցրին) Ռուսախինիլիում Կիլբանի երկրի սրբավայրի մոտից (բառացի՝ առջևից) 104 (մարդ) tardašhe, 1009 (մարդ) kirini, ընդամենը 1113 (մարդ) mari (=ավագանի*)։ 3784 ներքինի, 2409 պատանի, 119 (մարդիկ, որոնք գտնվում են) «հաշվի մարդու» մոտ, 68 մանածագործուհիներ (*), 1188 շնապահներ։ 300 զինված ազատ մարդիկ։ 90 մարդիկ բնակչության (*)։

Հակ. կողմ— 168 ծառա (*) պալատի, 108 ներքինիներ պալատի, 35 (մարդիկ) halbiw. 10 գինեգործներ (*) (կամ գինի քաշողներ), 15 (մարդիկ) şipika։ 52 (մարդիկ) unqaita, 15 (գտնվողներ) Ուբիաբիի առջև, 7 ջորեպաններ, 20 (մարդիկ զենքի) garurda (*), 10 մարդիկ (երկրի) Բ/Պուլիական։ Ընդամենը 5507 մարդ»[17]։

Ակներև է, որ Ռուսախինիլի քաղաքի հասարակությունը բաղկացած է եղել մի շարք խավերից ու ենթախավերից։

Առաջինը LU mari-ն, որը բաղկացած է 1113 հոգուց, Ի. Մ. Դյակոնովը[18] համարում է «ավագանու», «պալատականների» խավ։ Այդ խավը իր հերթին բաժանվել է 2 ենթախավերի՝ 1) LU tardašhe, որը բաղկացած է 104 հոգուց, 2) LU kirini, որը իր կազմով համեմատաբար ավելի մեծ է և բաղկացած է 1009 հոգուց։ Այս ենթախավի մասին խոսելիս իր վրա ուշադրություն է հրավիրում ուրարտերենի ki-ri «գավաթ»[19] բառը։ Հավանաբար LU kirini ենթախավի անվան հիմքում ընկած է ուրարտերենի kiri «գավաթ» բառը, և այդ ենթախավի LU kirini անունը նշանակում է «մարդ գավաթի» կամ «գավաթագործ»։ LU kirini ենթախավի անվան այսպիսի ստուգաբանությունը կասկածանքի տակ է դնում LU mari-ն «ավագանու», «պալատականների» խավ դիտելու տեսակետը և, ընդհակառակը, առաջ է բերում այն միտքը, որ այդ խավը ներկայացնում է արհեստավորներին ընդհանրապես և գավաթագործներին՝ մասնավորապես։

Երկրորդ խավը կազմում են «ներքինիները» LU SÂ.RÊŠ/MES։ Սա Ռուսախինիլի քաղաքի հասարակության ամենաբազմանդամ խավն է։ Նրա անդամների թիվը հասնում է 3784 հոգու։ Այս խավի մեջ մտնում են հետևյալ 4 ենթախավերը՝ 1) «պատանի» (LU arše), որը բաղկացած է 2409 հոգուց և իր

[17] C. F. Lehmann-Haupt. Materialien, S. 105, Figur 77a(1/1), 77b; Handbuch, Teil I, Tafel 98(131); УПД. № 12; УКН. № 286.

[18] И. М. Дьяконов. Некоторые данные о социальном устройстве Урарту (Сборник памяти академика А. И. Тюменева, М.—Л., 1963), с. 63. (Ի. Մ. Դյակոնովը LU mari տերմինը համարում է խուռիերենի mari-an-nu բառի հետ, որի մասին կա կարծիք, թե այն ունի հնդիրանական ծագում)։

[19] УКН, с. 400.

թվային տեսակետից ամենամեծ ենթախավն է, 2) «(մարդիկ, որոնք գտնվել են) հաշվի մարդու մոտ», 3) «մանածագործուհիներ» SAL.CAD-hi-e), 4) «շնապահներ» LU.UR.ZIR), որը բաղկացած է 1188 մարդուց և թվապես երկրորդ ենթախավն է։

Այս խավը բաղկացած է հիմնականում տնտեսական և ծառայական աշխատանք կատարողներից։ Դա երևում է նրա մեջ մտնող ենթախավերի անդամների զբաղմունքի տեսակից։ Եթե այդ ենթախավերից երկրորդը («մարդիկ, որոնք գտնվել են հաշվի մարդու մոտ») ծառայական աշխատանքներ է կատարել, ապա երրորդը («մանածագործուհիներ») և չորրորդը («շնապահներ») բացարձակապես կատարել են տնտեսական բնույթի աշխատանքներ։ Այդքան մեծ քանակությամբ (3784) ներքինիները, որոնք կազմել են Ռուսախինիլի քաղաքի տնտեսության ամբողջ անձնակազմի (5507) շուրջ 70 տոկոսը, աշխատել են, ինչպես ավելի կհամոզվենք հետագա շարադրանքի ընթացքում, ոչ թե պալատի ներսում, օրինակ՝ հարեմում, այլ պալատից դուրս և կատարել են այնտեղ եղած տնտեսական բնույթի աշխատանքներ, օրինակ՝ շնապահություն, մանածագործություն։

Նրանք զրկված են եղել ոչ միայն սեփական ունեցվածքից, այլև անձնական իրավունքից, այդ թվում մարդկային ամենատարրական հատկանիշից՝ սեռական հատկանիշից և նրանց մարդկային արժանապատվությունը իջեցված է եղել ամենացածրագույն աստիճանի վրա։ Ուշագրավ է, որ այդ LU.ŠÀ.RÊŠIMES «ներքինիներ» ընդհանուր հասկացության տակ տղամարդկանցից բացի հանդես են եկել նաև կանայք՝ մանածագործուհի կանայք։ Այս փաստը իր հերթին հաստատում է, որ նրանք նեղ իմաստով վերցրած ներքինիներ չէին, այլ եղել են տնտեսական բնույթի պետական հարկադիր աշխատանք կատարողներ, բայց հանգես են եկել «ներքինիներ» ընդհանուր հասկացության տակ։ Պետությունը, հավանաբար, դրանց ներքինացրել է նրանց ամուսնանալու, ընտանիք կազմելու պահանջից զրկելու, պետական տնտեսության հետ ընդմիշտ կապելու, նրանց ուժը ամբողջովին պետական տնտեսությանը տրամադրելու նպատակով։

Հիշատակված «հաշվի մարդը» ծառայել է Ռուսախինիլի քաղաքի տնտեսությունում, իր ձեռքի տակ ունեցել է մարդիկ, որոնք ենթարկվել են իրեն, այսինքն՝ նրանց միջև գոյություն է ունեցել վերադասի և ստորադասի փոխհարաբերություն։ «Հաշվի մարդու» կատարած աշխատանքի բնույթն է, ինքնըստինքյան թելադրում է, որ Ռուսախինիլի քաղաքի տնտեսությունում այդպիսի մարդիկ հաշվառում են անցկացրել՝ կապված տնտեսության աշխատողների, նրանց կատարած աշխատանքի արդյունքների հետ։ Օրինակ՝ նրանք կարող էին հաշվառման ենթարկել աշխատանքի արդյունքները, այդ աշխատանքի համար տրամադրված հումքը, միջոցները և այլն։ Փաստորեն հաշվի մարդիկ իրենցից ներկայացրել են ուրարտական Ռուսախինիլի քաղաքի հասարակության չինովնիկների խավը։

Երրորդ խավը՝ LU.KUR.KURMES որը բաղկացած է ընդամենը 300 հոգուց և չի բաժանվում որևէ ենթախավի, Ի. Մ. Դյակոնովը դիտում է որպես «ցեղի զինված ազատ մարդիկ»[20] կամ «ցեղի ազատ համայնական-աշխարհազորայինների ջոկատ, որը ծառայում է պալատին կից»[21]։

Սակայն LU.KUR.KURMES տերմինը մեկնաբանելիս իր վրա ուշադրություն է հրավիրում ինչպես նրա LU դետերմինատիվը, որը սովորաբար օգտագործվում է մարդկանց կատեգորիան ցույց տալու համար, այնպես էլ KUR.KUR արմատը և հոգնակիության իմաստ արտահայտող MEŠ ցուցիչը։

---

20 УПД, № 12, стк. 15.

21 И. М. Дьяконов. Некоторые данные о социальном устройстве Урарту (Сборник памяти академика А. И. Тюменева, с. 56. Ի. Մ. Դյակոնովը KUPsurelI տերմինը համարում է ուրարտերենի GISsure «զենք» բառի հետ և մեկնաբանում՝ զինված ուժեր, ցեղային աշխարհազոր, ժողովուրդ (УПД, с. 91).

«Բազմակիության» իմաստ են արտահայտում նաև ^{LÚ}KUR.KUR^{MEŠ} տերմինի ուրարտերեն ^{KUR}šureli[22] և ասուրերեն kiššati[23] «բազում»[24] համարժեքները։ Ընդ որում, ուրարտացիները, թեև հավատարիմ մնալով իրենց կոնկրետ լեզվամտածողությանը ^{KUR}šureli համարժեքությունը գրել են բառին կոնկրետության նշանակություն հաղորդող KUR դետերմինատիվով, բայց նրա šureli արմատում, ի դեմս հոգնակիության li ցուցիչի, պահպանել են ասուրական kiššati «բազում» բառի իմաստը։ Ի տարբերություն ^{KUR}Nairi-^{KUR}Biainili-^{KUR}Urartu տերմինների[25], որոնք ցույց են տվել կոնկրետ վերցրած բուն Ուրարտուն, kiššati-^{KUR}šureli-KUR.KUR^{MEŠ} տերմինները[26] ցույց են տվել Ուրարտուին ենթարկվող բոլոր երկրները, մարզերը, որոնց մեջ են մտել նաև նվաճված երկրները[27]։

Հետևաբար, ^{LÚ}KUR.KUR^{MEŠ} տերմինը նշանակում է «մարդիկ բազում երկրների», այսինքն՝ մարդիկ (ներկայացուցիչների իմաստով) բոլոր այն երկրների, մարզերի, որոնք ենթարկվել են ուրարտական պետությանը։ Բնական է, որ խոսքը վերաբերում է նաև նվաճված երկրների բնակչությանը, նրանց ներկայացուցիչներին։

Չորրորդ խումբը՝ «մարդիկ ժողովրդի» (^{LÚ}UKU^{MEŠ}-še, վանկագիր ^{LÚ}na-ra-ni), բաղկացած է 90 հոգուց և չի բաժանվում որևէ ենթախմբի։ Այս խումբը, փաստորեն, ներկայացնում է շարքային մարդկանց, աշխատավոր մարդկանց, որոնք, ինչպես հաստատում են այլ փաստերը[28], վերցվել են համայնականներից՝ պետական տնտեսությունում աշխատեցնելու նպատակով։

Հինգերորդ խումբը կազմում են ^{LÚ}e-ši-a-te É.GAL, որը Ի. Մ. Դյակոնովը թարգմանում է «ծառա պալատի»։ Սակայն ուրարտերենում «ծառա» կամ «ստրուկ» բառը արտահայտված է ^{LÚ}ծu-ra(^{LÚ}ERUM) տերմինով։ Ուստի Ի. Մ. Դյակոնովի թարգմանությունը չի հիմնավորվում։ Այս խումբը բազմանդամ չէ, սրա մեջ մտնում են 168 մարդ, իր մեծությամբ գրավում է չորրորդ տեղը։ Այն բաղկացած է հետևյալ 4 ենթախմբերից՝ 1) «ներքինի պալատի» ^{LÚ}ŠĀ RĒŠI É. GAL), որի մեջ մտնում են 100 հոգի, 2) «մարդ halbiw», որի մեջ մտնում են 10 հոգի, 3) «մարգիկ գինեգործ» (^{LÚ}É.TIM^{MEŠ}-ni), որի մեջ մտնում են 10 հոգի, 4) «մարդ ṣipika», որի մեջ մտնում են 15 հոգի։

Արձանագրությունում հիշատակված վեց խմբերից առանձնանում է 5-րդը նրանով, որ միայն նրա հետ կապված է ընդգծվում «պալատի» (É.GAL) գաղափարը։ Փաստորեն այդ խմբի մեջ մտնող բոլոր 4 ենթախմբերը ծառայություն են կատարել պալատում։ Սրա ենթախմբերից առաջինի՝ ^{LÚ}ŠĀ REŠI.É.GAL «ներքինի պալատի» անվան ŠĀ.RĒŠI «ներքինի» գլխավոր բաղադրամասի հետ գործածված E.GAL «պալատ» բառը ընդգծում է, թե 5-րդ խմբում հիշատակված ներքինիները տարբերվել են 2-րդ խմբում հիշատակվածներից։ Ընդ որում, եթե 5-րդ խմբում հիշատակվածները պալատի ներքինիներն են, ապա 2-րդ խմբում հիշատակվածները պալատի հետ կապ չունեն։ Նրանք, ինչպես վերևում ասվեց, նեղ իմաստով վերցրած ներքինու

---

22 УКН, № 19, ուրարտերեն տեքստ, տող 3 (համեմատել՝ УКН, № 165, стк. 10; № 280, стк. 14)։

23 УКН, № 19, ասուրերեն տեքստ, տող 2։

24 Л. А. Липин. Аккадский (вавилоно-ассирийский язык) словарь, вып. II, Л., 1957, с. 105.

25 УКН, № 19, ասուրերեն տեքստ, տող 3, ուրարտերեն տեքստ, տող 3 264., ուրարտերեն տեքստ, տող 29, ասուրերեն տեքստ, տող 27։

26 УКН, № 19, ասուրերեն տեքստ, տող 2, ուրարտերեն տեքստ, տող 3, № 165, տող 10, № 289, տող 14 (համեմատել № 24, երեսի կողմ, տող 27, հակառակ կողմ, տող 34 և այլն)։

27 Д. Н. Саркисян. О некоторых документах страны Аза, связанных с социальными отношениями в Урарту (ВОН, 1988, № 3), с. 81, прим. 64.

28 УКН, № 155, G, стк. 6.

աշխատանք չեն կատարել, ինչպես պալատի ներքինիները, այլ կատարել են պալատից դուրս գտնվող տնտեսական աշխատանքներ և իրենցից ներկայացրել են ներքինացած պետական հարկադիր աշխատանք կատարողներ։ Այս փաստերը թույլ են տալիս ասելու, որ արձանագրությունում ընդհանրապես խոսվում է ինչպես ուրարտական քաղաքում գտնվող պալատի և նրա աշխատողների, այնպես էլ պալատից դուրս գտնվող տնտեսության աշխատող մարդկանց մասին։ Ընդ որում, եթե 5-րդ խավի անդամները պալատի աշխատողներ են, ապա մյուս խավերինը, հավանաբար, պալատից դուրս գտնվող տնտեսության աշխատողներ։

Եթե «ծառա պալատի» խավի ենթախավերից «մարդ halbiw» և «մարդ sipika» ենթախավերի պալատում կոնկրետ կատարած աշխատանքի բնույթը անորոշ է, ապա «ներքինի պալատի» և «մարդիկ գինեգործ» ենթախավերից առաջինը կատարել է պալատի ներքինու ծառայական աշխատանք, իսկ երկրորդը տնտեսական, տվյալ դեպքում՝ գինեգործական աշխատանք։

Վեցերորդ խավը կոչվում է «մարդ unqaita»։ Սա Ռուսախինիլի քաղաքի տնտեսության աշխատողների ամենափոքր խավն է։ Սրա մեջ մտնում են ընդամենը 52 մարդ։ Այս խավը բաղկացած է հետևյալ 4 ենթախավերից՝ 1) «Ուբիաբիի մոտ (գտնվողներ)», որի մեջ մտնում են 15 հոգի, 2) «ջորեպաններ», որի մեջ մտնում են 7 հոգի, 3) «(մարդիկ զենքի) garurda», որի մեջ մտնում են 20 հոգի, 4) «մարդիկ (երկրի) Բ/Պուլիական», որի մեջ մտնում են 10 հոգի։

Եթե «Ուբիաբիի մոտ (գտնվողներ)» և «մարդիկ (երկրի) Բ/Պուլիական» ենթախավերի կատարած կոնկրետ աշխատանքի բնույթը անորոշ է և միայն կարելի է ասել, որ դրանցից առաջինը ծառայական աշխատանք է կատարել ոմն Ուբիաբիի մոտ, իսկ երկրորդը ցույց է տալիս, որ ուրարտական արքայական կամ պետական տնտեսությունում գտնվել են ինչ-որ Բ/Պուլիական երկրի մարդիկ, ապա «ջորեպաններ» և «(մարդիկ զենքի) garurda» ենթախավերից առաջինը կատարել է ջորեպանության հետ կապված տնտեսական բնույթի աշխատանքներ, իսկ երկրորդը՝ զենքի, զինագործական արհեստի հետ կապված աշխատանքներ։

Այս խավում հիշատակված «Ուբիաբիի առաջ (գտնվողներ)» ենթախավում ընդգծվում է Ուբիաբիի արտոնյալ դիրքը իր մոտ գտնվող մարդկանց նկատմամբ։ Եթե Ուբիաբին ներկայացնում է տերերի դասը, ապա նրա մոտ ծառայողները՝ ճնշվածների դասը։ Այս փաստը ցույց է տալիս, որ հավանաբար վեցերորդ խավում հիշատակված մյուս ենթախավերի անդամները՝ «ջորեպանները», «մարդիկ (երկրի) Բ/Պուլիական», «(մարդիկ զենքի) garurda» ևս պատկանում են ճնշվածների դասին։

Փաստորեն հիշյալ արձանագրության տվյալները վկայում են, որ Ռուսախինիլի քաղաքի հասարակության խավերից են՝ 1) «մարիները» կամ պալատից դուրս աշխատող արհեստավորները, որոնց մեջ են մտել «թարդաշխեները» և «գավաթագործները». 2) պալատից դուրս, պետական տնտեսությունում հարկադիր աշխատանք կատարող «ներքինիները», որոնց մեջ են մտել «պատանիները», «հաշվի մարդու մոտ աշխատողները», «մանածագործուհիները», «շնապահները». 3) «շուրելիները» կամ ներկայացուցիչները բաղում երկրների, որոնք ենթարկվում էին Ուրարտուին. 4) «ժողովրդի մարդիկ» կամ շարքային, աշխատավոր մարդիկ, որոնք վերցվել էին համայնականներից՝ աշխատեցնելու նպատակով. 5) «էշիաթեներ պալատի» կամ «էշիաթե մարդիկ պալատի», որոնց մեջ են մտել «պալատի ներքինիները» «խալբիվները պալատի», «գինեգործները պալատի», «ծիպիքանները պալատի». 6) «ունկաիթաները» կամ «ունկաիթա մարդիկ», որոնց մեջ են մտել ոմն «Ուբիաբիի մոտ աշխատողները», «ջորեպանները», «գարուրդա զինագործները», «պուլիացիները» կամ «Պուլի երկրի մարդիկ»։ Դրանցից «հաշվի մարդը» և ոմն Ուբիաբին եղել են պետության ներկայացուցիչներ, արտոնյալ դասին, տերերի դասին պատկանող մարդիկ, իսկ մյուսները եղել են ճնշվածների դասին, ծառաների կամ ստրուկների դասին պատկանող մարդիկ։